ԿԱՐԾԻՔ

ԳՐԻԳՈՐ ԵԴԻԳԱՐԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ «ՄԱՐԶԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ՈՒ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԱԳԱՈՒԺԱՅԻՆ ՄԱՐԶԱՁԵՎԵՐՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԺԳ.00.02 - «ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ» (ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ) ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Գ.Բարսեղյանի ատենախոսությունը նվիրված է արագաուժային մարզաձևերում մարզական բարձր արդյունքների ցուցադրման գործոնների և դրսևորման առանձնահատկությունների բացահայտմանը: Վերջին տարիներին բարձր նվաճումների սպորտին նվիրված համալիր ուսումնասիրությունները և հետազոտությունները շատ չեն:

Այս առումով ատենախոսական աշխատանքը արդիական է և չափազանց կարևոր, հետազոտության արդյունքները կարող են օգնել տարբեր որակավորման մարզիկների սպորտային պատրաստության գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը:

Հեղինակի կողմից փորձ է արվել ուսումնասիրված մարզական բարձր արդյունքներին հասնելու առաջնային գործոնների մոդելային բնութագրերը ներդնել մարզական գործընթացում, ինչպես նաև փաստարկել դրանց դրսևորման մեխանիզմները ու կապերը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածների բաժնից: Այն պարունակում է 17 աղյուսակ, 11 գծապատկեր և 10 նկար: Օգտագործած գրականության ցանկը ներկայացված է 182 աղբյուրով: Ատենախոսությունը շարադրված է համակարգչային 138 էջի վրա:

Ներածական բաժնում հեղինակը տալիս է հետազոտության արդիականության, նպատակի, օբյեկտի, առարկայի, խնդիրների, մեթոդների ու վարկածի դրույթների պարզաբանումները: Տրվում է հետազոտության գիտական նորույթի, աշխատանքի տեսական և գործնական նշանակության, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթների, հետազոտության կազմակերպման, հետազոտվողների

քանակակազմի, արդյունքների հուսալիության ատենախոսության փորձաքննությունների և կառուցվածքի նկարագրությունը:

Առաջին գլուխը «Մարզական բարձր արդյունքների ցուցադրման հիմնախնդիրները բարձր նվաճումների սպորտում» վերնագրով բաղկացաց է երեք ենթագլուխներից: Առաջին գլխում վերլուծված է բարձր նվաճումների սպորտի արդի հիմնախնդիրները և ներկա մարտահրավերները:

Ներկայացված են մեծ թվով հետազոտությունների արդյունքները, որոնք վկայում են ժամանակակից սպորտի զարգացման հիմնական գործոնների մասին, ինչը խթանում է մարզական արդյունքների աննախադեպ աճին:

Երկրորդ գլուխը՝ «Մրցակցային գործունեության արդյունավետության բնութագրերը սպորտում» վերնագրով, որը բաղկացած է չորս ենթագլուխներից և բնութագրում է մրցակցային գործունեության կառուցվածքը, տեխնիկան, ռազմավարությունը և մարտավարությունը, ինչպես նաև արդյունքների գնահատումը սպորտում: Հեղինակի կողմից ներկայացվում է փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծություն, կոնկրետ մրցաձևի (հեռացատկ) տեխնիկայի բնութագրման վերաբերյալ, տարբեր որակավորման մարզիկների օրինակով:

Ատենախոսության երրորդ գլխում, որի վերնագիրն է «Մարզական բարձր արդյունքների ցուցադրման առաջատար գործոնների հետազոտության արդյունքներն արագաուժային մարզաձևերում», ներկայացված է աշխատանքի բուն հետազոտությունների կազմակերպումը, ընթացքը, արդյունքների վերլուծությունները, ինչպես նաև մանկավարժական գիտափորձի կազմակերպումը:

Հետազոտության խնդիրները, մեթոդները և կազմակերպման յուրահատկությունները ընտրվել են արագաուժային մարզաձևերում տարբեր հեղինակների ուսումնասիրությունների մեթոդիկաները, որոնք որպես մանկավարժական և հոգեբանական թեստեր կիրառվել են մարզիկների պատրաստվածության աստիճանը որոշելու, գնահատելու, վերահսկելու և մարզական արդյունքներն կանխատեսելու նպատակով:

Ներկայացված հետազոտությունները կազմակերպվել են ըստ մարզիկի սպորտային պատրաստության ոլորտների.

1. *Ֆիզիկական զարգացում,*
2. *Շարժողական ընդունակություններ,*
3. *Հոգեշարժիչ ցուցանիշներ,*

4. *Մրցակցային գործունեության արդյունավետության ցուցանիշներ:*

Հետազոտությունները անց են կացվել Գյումրի քաղաքում, բարձր և ցածր որակավորում ունեցող մարզիկների հետ: Ընտրվել են չորս արագաուժային մարզաձևեր՝ աթլետիկա, բռնցքամարտ, ըմբշամարտ, ծանրամարտ, յուրաքանչյուրից 20-ական բարձր որակավորման և նույնքան ցածր որակավորման մարզիկներ: Յուրաքանչյուր մարզաձևից 40-ական մարզիկ, (ընդամենը 160 մարզիկ): Հետազոտվել են յուրաքանչյուր մարզիկի համար 34 հիմնական ցուցանիշներ:

Իրականացվել է հետազոտության արդյունքների համեմատական վերլուծություն.

1. Յուրաքանչյուր մարզաձևում բարձր և ցածր որակավորման մարզիկների խմբերի միջև,
2. Ընտրված մարզաձևերի միջև,
3. Բարձր և ցածր որակավորման մարզիկների ընդհանուր խմբերի միջև,
4. Բարձր որակավորման մարզիկների հետազոտված ցուցանիշների համահարաբերակցական կապերի ընդհանուր վերլուծություն,
5. Բարձր և ցածր որակավորման մարզիկների սպորտային պատրաստության գործոնային համեմատական վերլուծություն,
6. Մանկավարժական գիտափորձում ընդգրկված փորձարարական և ստուգողական խմբերում ուսումնասիրվող ցուցանիշների կրած փոփոխությունների վերլուծություն:

Հիմք ընդունելով հետազոտության արդյունքները և գործոնային վերլուծության ցուցանիշները, կառուցվել են արագաուժային մարզաձևերում մարզական բարձր արդյունքների ցուցադրման հիմնական գործոնների մոդելային սխեմաներ, որոնք կարող են նաև հիմք ծառայել տարբեր մարզաձևերում մարզիկների սպորտային պատրաստության գործընթացի վերահսկման ու գնահատման համար:

Մանկավարժական գիտափորձի ընթացքը և արդյունքների վերլուծությունը կատարվել է հիմք ընդունելով հեղինակի կողմից նախապես հետազոտված ցուցանիշների արդյունքների վերլուծությունները, մանկավարժական գիտափորձում ներառվել են այն հիմնական ցուցանիշները, որոնք արագաուժային մարզաձևերում հանդիսանում են մարզական բարձր արդյունքների ցուցադրման,

մարզիկի պատրաստվածության աստիճանի հիմնական ու առաջնային բաղադրամասեր: Գիտափորձի նպատակն էր բացահայտել մարզական պարապմունքներին ներդրված և տեղայնացված վարժությունների համալիրների և խորհրդատվությունների ներգործության աստիճանը, սպորտային պատրաստության հիմնական ցուցանիշների և առաջատար գործոնների աճի դինամիկայի վրա:

Մանկավարժական գիտափորձը շարունակվել է ինն ամիս, որտեղ փորձարարական խմբերում (4 խումբ), արագաուժային մարզաձևերի (աթլետիկա, բռնցքամարտ, ըմբշամարտ, ծանրամարտ) պարապմունքներին ներդրվել են հեղինակի կողմից մշակված և ընտրված վարժությունների համալիրները: Նախանշված վարժությունների համալիրներից կազմվել են փնջեր (խումբ)՝ ընտրած արագաուժային մարզաձևերի առանձնահատկություններից ելնելով:

Փորձարարական և ստուգողական խմբերում ընդգրկվել են պատանի 40-ական հետազոտվող մարզիկներ: Հետազոտություններն անցկացվել են Գյումրու ՕՊՄՀՔ-ի և Աթլետիկայի մարզադպրոցի մարզիկների հետ:

Պատանի մարզիկների սպորտային պատրաստության ուսումնասիրված ցուցանիշները զարգացման հավաստի տեղաշարժեր են արձանագրել մանկավարժական գիտափորձի արդյունքում:

Մանկավարժական գիտափորձից ստացված արդյունքները մշակվել են մաթեմատիկական վիճակագրական մեթոդներով և ունեն հավաստիության բարձր մակարդակ:

Անհրաժեշտ է նշել, որ աշխատանքն աչքի է ընկնում իր բաժինների և մտքի տրամաբանական հերթականությամբ՝ ապահովելով մանկավարժական գիտափորձի տեսական և մեթոդական հիմքերը:

Գ.Բարսեղյանը լիովին լուծել է հետազոտության առջև դրված խնդիրները, որոնք արտացոլված են եզրակացություններում:

Դրական գնահատելով կատարված հետազոտական աշխատանքը և կարևորելով ստացված արդյունքների գործնական նշանակությունը՝ հարկ է նշել նաև աշխատանքում տեղ գտած որոշ բացթողումներ, որոնք պարզաբանման կարիք ունեն.

1. Պարզաբանման կարիք ունի այն, թե ինչ բանաձևով են որոշվել համահարաբերակցական կապերը, քանի որ ատենախոսության տեքստում հղումը

տրվում է միայն հեղինակներին (Ժ. Գոդֆրուա, 1992 թ., Բ.Գ. Կորոստելկին 2001թ.), և պարզ չե թե ինչպես է կատարվել հաշվարկը:

2. Ինչպես են ընտրվել գիտափորձի ընթացքում փորձարկված 22 ցուցանիշները:

3. Աշխատանքում առկա են որոշ կառուցվածքային և բովանդակային թերացումներ, օրինակ՝ երրորդ գլխի մի մասը կարելի էր ներկայացնել առաջին գլխում, քանի որ ներկայացված նյութը պարունակում է որոշ հատվածներում տեսական նյութի վերլուծություններ:

4. Ատենախոսության տեքստում առկա են որոշ վրիպակներ. 6-րդ էջի՝ 1-ին պարբերություն՝ «նշանակալաի» բառը փոխարինել «նշանակալի» բառով, 6-րդ էջի՝ 3-րդ պարբերության 4-րդ տողի «ֆուկցիոնալ» բառը՝ «ֆունկցիոնալ» բառով, 67-րդ էջի՝ 2-րդ պարբերության 3-րդ տողի «պատրստվածությունը» բառը՝ «պատրաստվածությունը» բառով:

Սակայն վերը նշված նկատառումները ամենևին չեն նվազեցնում իրականացված մեծածավալ հետազոտության արդյունքները և կիրառական նշանակությունը:

Հետազոտական աշխատանքը աչքի է ընկնում հստակ կառուցվածքով, նյութի ուսումնասիրման հստակ տրամաբանությամբ և ստացված արդյունքների գրագետ մեկնաբանությամբ: Եզրակացությունները հստակ են և ամբողջովին արտացոլում են հետազոտության ընթացքում ստացած հիմնական արդյունքները: Սեղմագրում լիովին ներկայացված են ատենախոսության հիմնական դրույթները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսական աշխատանքի թեմայի արդիականությունը, նրա գիտական նորույթը, գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքների հավաստիությունը և արված հիմնավոր եզրակացությունները հիմք են տալիս Գրիգոր Եդիգարի Բարսեղյանի «Մարզական բարձր արդյունքների ցուցադրման գործոններն ու դրսևորման առանձնահատկություններն արագաուժային մարզաձևերում» թեմայով ատենախոսությունը համարել ավարտուն, ինքնուրույն գիտական աշխատանք:

Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈՀ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ ատենախոսն անկասկած արժանի է հայցվող մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի պետ, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ *Ս.Մ. Աբրահամյան*

Ս.Մ. Աբրահամյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ՝ *Ռ. Գրիգորյան*

«06» 11 2020թ.